ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիր

2009 թ. III եռամսյակ

Բովանդակություն

2009 թվականի երկրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները և զարգացումները	3
Հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածի կանխատեսումները	7
Արտաքին միջավայր	7
Համախառն առաջարկ	8
Աշխատանքի շուկա	9
Համախառն պահանջարկ.....	10
Փող և վարկ	11
Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում	13

2009 թվականի երկրորդ եռամսյակում գնաճի վարքագիծը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները պայմանավորող հիմնական գործոնը տնտեսական անկման տեմպերի աճն էր: Չնայած մարտի սկզբին տեղի ունեցած դրամի արժեզրկմանը, միջազգային շուկաներից որոշակի գնաճային ճնշումների փոխանցմանը, ինչպես նաև ապրիլից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների բարձրացմանը, կանխատեսվածից ավելի արագ տեմպերով ՀՆԱ անկման պայմաններում, ընդհանուր առմամբ, ձևավորվել է ներքին ցածր գնաճային միջավայր: Ընդ որում, վերոնշյալ գործոնների ազդեցությամբ թեև գնաճի տեմպը նախորդ եռամսյակի համեմատ զգալիորեն աճել է, սակայն մոտ 1 տոկոսային կետով զիջել է կանխատեսվածին՝ գտնվելով նպատակային միջակայքի ստորին հատվածում:

Վերոնշյալ զարգացումների արդյունքում 2009 թվականի երկրորդ եռամսյակում արձանագրվել է 4.5% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 3.6%՝ նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ աճելով 2.6 տոկոսային կետով: Ընդ որում, պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները եռամսյակի ընթացքում ավելացել են 2.7%-ով (նպաստումը գնաճին՝ 1.4 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 7.5%-ով (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ) և ծառայությունների սակագները՝ 6.2%-ով (նպաստումը գնաճին՝ 1.9 տոկոսային կետ): Եռամսյակի ընթացքում գնաճը հիմնականում պայմանավորվել է մրգի գնի 39.4% (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), բենզինի գնի 20.5% (նպաստումը գնաճին՝ 0.5 տոկոսային կետ), դեղամիջոցների գների 16.3% (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ), ինչպես նաև բնակարանային, կոմունալ ծառայությունների սակագների 18.3% (նպաստումը գնաճին՝ 1.3 տոկոսային կետ) աճով:

Միաժամանակ, բնականոն գնաճը 2009 թ. երկրորդ եռամսյակում 2.1%[1] էր, որի պարագայում 12-ամսյա բնականոն գնաճը նախորդ եռամսյակի համեմատ գրեթե չի փոփոխվել՝ կազմելով շուրջ 3.4%:

Արտաքին միջավայր[2]

Համաշխարհային տնտեսական անկման տեմպերը 2009թ. երկրորդ եռամսյակում փոքր-ինչ դանդաղեցին, թեև տնտեսության վերականգնման ժամկետները դեռևս մնում են բավականին անորոշ: Համաշխարհային տնտեսական անկումը, ԱՄՀ գնահատումների համաձայն[3], 2009թ. կկազմի 1.4 տոկոս, մինչդեռ 2010թ. կանխատեսվում է 2.5 տոկոս տնտեսական աճ: 2009թ. երկրորդ եռամսյակում ևս բոլոր երկրները շարունակեցին իրացվելիություն ներարկել տնտեսություն՝ ծավալային ընդլայնման և խթանող հարկաբյուջետային քաղաքականությունների միջոցով, որոնց հիմնական թիրախը ֆինանսական շուկաների կայունության վերականգնումն էր և համախառն պահանջարկի խթանումը:

Համաշխարհային տնտեսական անկման պայմաններում պահպանվել է արտաքին հատվածի ցածր գնաճային միջավայրը, թեև եռամսյակի ընթացքում արձանագրվել է որոշ ապրանքների գների աճ: Սա հիմնականում պայմանավորվել է ապագա սպասումների փոքր-ինչ բարելավմամբ, ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր շուկային բնորոշ գործոններով:

2009 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, նավթի միջազգային գների աճ է գրանցվել. Brent տեսակի հում նավթի բարելի միջին

---

[1] ՀՀ ԿԲ կողմից մշակված բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր» պարբերականում (2008 թ. 1-ին եռամսյակ). նույն պարբերականում պարբերաբար հրապարակվում են բնականոն գնաճի ցուցանիշները:

[2] Բոլոր թվային տվյալների աղբյուրը Bloomberg տեղեկատվական համակարգն է:

[3] IMF World Economic Outlook Update, 08/07/09.

գինը կազմել է 59 ԱՄՆ դոլար՝ տ/տ նվազելով 51.7 տոկոսով, սակայն նախորդ եռամսյակի համեմատ աճել է 31 տոկոսով: Աճը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային տնտեսության վերականգնման լավատեսական սպասումներով և OPEC-ի կողմից սահմանափակ առաջարկի հետևողական քաղաքականությամբ:

Լոնդոնի մետաղների բորսայում պղնձի գինը երկրորդ եռամսյակում միջինը կազմել է 4690 ԱՄՆ դոլար տոննայի դիմաց՝ եռ/եռ աճելով 36%-ով, մինչդեռ տ/տ նվազումը կազմել է 44.5 տոկոս:

Ոսկու գինը երկրորդ եռամսյակի ընթացքում միջինը կազմել է 922 ԱՄՆ դոլար՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 1.5 տոկոսով: Ոսկու գինը չի նվազել նաև տարեկան կտրվածքով՝ հիմնականում պահուստային միջոց հանդիսանալու պատճառով:

Երկրորդ եռամսյակում գների որոշակի աճ է արձանագրվել նաև Պարենային ապրանքների ոլորտում: Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հացահատիկի գինը բուշելի դիմաց կազմել է (միջինը) 6.8 ԱՄՆ դոլար: Բրնձի գինը նախորդ եռամսյակի համեմատ գրեթե չի փոփոխվել՝ ամերիկյան ցենտների /45.3 կգ/ դիմաց միջինը կազմելով շուրջ 12.5 ԱՄՆ դոլար:

Էապես ավելացել է շաքարավազի գինը՝ միջինը կազմելով 15.6 ԱՄՆ դոլար՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 17.7 տոկոսով, իսկ տ/տ աճը կազմել է 27.6 տոկոս: Շաքարավազի գնի աճի հիմնական պատճառը Հնդկաստանի պահանջարկի աճն է (սեփական աղքատ բերքի հետևանքով): Կարագի գինը, նախորդ եռամսյակի համեմատ, նվազել է մոտ 6.5%-ով:

Ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի փոխարժեքը երկրորդ եռամսյակում եռ/եռ արժեզրկվել է գրեթե 5 տոկոսով՝ եվրոյի նկատմամբ կազմելով (միջինը) 1.36 ԱՄՆ դոլար, մինչդեռ տ/տ ԱՄՆ դոլարի արժևորումը կազմում է 14.7 տոկոս:

Պայմանավորված շարունակվող համաշխարհային տնտեսական ճգնաժամով՝ Դաշնային պահուստային համակարգը շարունակել է իր «ծավալային ընդլայնման» քաղաքականությունը, իսկ ԱՄՆ դոլարով 3-ամսյա LIBOR միջբանկային տոկոսադրույքը շարունակել է նվազել՝ կազմելով 0.85 տոկոս: Եվրոպական կենտրոնական բանկը 2009 թվականի երկրորդ եռամսյակում տոկոսադրույքները իջեցրել է 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 1% մակարդակ:

Այսպիսով, չնայած երկրորդ եռամսյակում գրանցվել է միջազգային գների որոշակի աճ, սակայն դրանք, վերջին տարիների համեմատ, դեռևս էապես ցածր մակարդակ ունեն, ինչը պահպանում է ցածր գնաճային արտաքին միջավայրը:

Համախառն առաջարկ[4]

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը առավել խորացավ 2009 թվականի երկրորդ եռամսյակում՝ հանգեցնելով շուրջ 22.9% տնտեսական անկման (հունվար-հունիսին՝ 16.3% տնտեսական անկում): Անկում է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, ընդ որում՝՝ այն առավել մեծ է արդյունաբերության և շինարարության ճյուղերում: Մասնավորապես՝ ***արդյունաբերության*** ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի շուրջ 13.2% նվազում՝ հիմնականում պայմանավորված հունվար-մայիսին մետաղական հանքաքարերի արդյունահանման (9.1%-ով), քիմիական արդյունաբերության (50%-ով), շինանյութերի արտադրության (29.7%-ով) և ոսկերչական արտադրատեսակների (56.1%-ով) արտադրության ծավալների նվազմամբ, որը ինչպես շինարարության անկման, այնպես էլ

[4] *2009 թվականի երկրորդ եռամսյակի տնտեսության ճյուղերի և ՀՆԱ աճի ցուցանիշները գնահատումներ են՝ հունվար-հունիս փաստացի ցուցանիշների հիման վրա: Համախառն առաջարկի և համախառն պահանջարկի հատվածներում ներկայացված են աճի տ/տ ցուցանիշները, եթե այլ բան նշված չէ:*

արտաքին պահանջարկի կրճատման հետևանք է: Նման զարգացումների պայմաններում նվազել է էլեկտրաէներգիայի և գազի պահանջարկը և, արդյունքում, էներգետիկայի ենթաճյուղում արձանագրվել է 9.3% անկում:

Շինարարության ճյուղում ավելացված արժեքը նվազել է մոտ 60.6%-ով՝ պայմանավորված կապիտալ ներհոսքի և բնակչության եկամուտների կրճատմամբ: Հիմնականում հունվար-մայիսին կրճատվել է բնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվող շինարարությունը՝ համապատասխանաբար 68.7% և 37%-ով:

Շինարարության ճյուղային բաշխվածության կառուցվածքում զգալիորեն նվազել են բնակարանային շինարարության, տրանսպորտի և առևտրի ոլորտներում իրականացվող շինարարության ծավալները:

Գյուղատնտեսությունում արձանագրվել է ավելացված արժեքի 1.1% նվազում՝ պայմանավորված անասնապահության արտադրության ծավալների կրճատմամբ: Անասնապահության ենթաճյուղում մասնավորապես նվազել են մսի և կաթի արտադրությունը (հունվար-մայիսին համապատասխանաբար 5.9%-ով և 10.3%-ով), իսկ ձվի արտադրությունն ավելացել է 17.8%-ով: Մինչդեռ բուսաբուծության գծով եռամսյակի ընթացքում որոշակի աճ է արձանագրվել:

Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքը նվազել է 1.1%-ով՝ հիմնականում պայմանավորված առևտրի ծավալների կրճատմամբ, որը հետևանք է ավտոմեքենաների առևտրի ծավալների շուրջ 50.2% նվազման: Այլ ծառայությունների ոլորտում արձանագրված նվազումը հիմնականում ֆինանսական գործունեության և տրանսպորտային ծառայությունների կրճատման հետևանք է:

Աշխատանքի շուկա[5]

2009 թվականի երկրորդ եռամսյակում, չնայած տնտեսական անկման բարձր տեմպերին, տնտեսության անվանական աշխատավարձերի միջին աճը կազմել է շուրջ 4.0%՝ պայմանավորված բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում աշխատավարձերի որոշակի աճով, ինչպես նաև աշխատանքի շուկայում առկա աշխատավարձի ճշգրտման կոշտություններով: Կոշտությունների որոշակի դրսևորումներ են նկատվել նաև գործազրկության առումով, ինչի արդյունքում վերջինիս եռամսյակային միջին մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է ընդամենը 0.6 տոկոսային կետով և կազմել 6.9%: Արդյունքում եռամսյակի ընթացքում նկատվել է աշխատանքի արտադրողականության զգալի՝ շուրջ 17.0% անկում:

Նշված զարգացումները հանգեցրել են միավոր աշխատուժի ծախսերի որոշակի աճի, և սպառողական շուկայում աշխատանքի շուկայի կողմից շուրջ 1 - 1.5% գնաճային ճնշումների:

Համախառն պահանջարկ[6]

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2009 թվականի երկրորդ եռամսյակում մասնավոր ծախսումներն իրական արտահայտությամբ նվազել են շուրջ 19.2%-ով՝ արտացոլելով բնակչության եկամուտների, մասնավորապես՝ արտաքին տրանսֆերտների նվազումը, ներդրումային միջավայրում անորոշությունների առկայությունն ու տնտեսական ակտիվության վերաբերյալ բացասական սպասումները: Մասնավոր ծախսումների

---

[5] *Աշխատանքի շուկայի երկրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված ապրիլ ամսվա փաստացի, մայիս և հունիս ամիսների գնահատված ցուցանիշների վրա:*

[6] *Մասնավոր հատվածի սպառման և ներդրումների պաշտոնական տվյալները 2009 թվականի առաջին եռամսյակի դրությամբ են:*

կառուցվածքում ներդրումներն իրական արտահայտությամբ նվազել են ավելի քան 48.0%-ով, իսկ սպառումը՝ շուրջ 8.0%-ով:

Երկրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր հատվածի ծախսումները զսպող ազդեցություն են ունեցել գնաճի վրա: Այսպես, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը ցածր է եղել պոտենցիալ մակարդակից 9-10%-ով: Վերջինս գնանկումային ճնշումներ է առաջացրել սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը 2.7-3.0 տոկոսային կետով:

2009թ. երկրորդ եռամսյակի ընթացքում, համաշխարհային և ներքին տնտեսության զարգացումների պայմաններում, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի առանձին հոդվածների գծով էական տեղաշարժեր չեն արձանագրվել, և պահպանվել են առաջին եռամսյակի միտումները: Առևտրային հաշվեկշռի պակասուրդի կրճատումը շարունակվել է. արձանագրվել է ապրանքների և ծառայությունների արտահանման[7] տ/տ 33.8% նվազում՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման[8] տ/տ 28.7% նվազման պարագայում: Արտահանման նվազումը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային շուկաներում մետաղների գների ցածր մակարդակի պահպանմամբ, որի հետևանքով հիմնական ապրանքախմբերի մասով նվազման բարձր տեմպեր են արձանագրվել: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների նվազումը երկրորդ եռամսյակում կազմել է տ/տ 6.4%:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազումը պայմանավորվել է համաշխարհային շուկաներում ցածր գնաճային միջավայրով և ներքին պահանջարկի շարունակական նվազմամբ: Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալները նվազել են տ/տ 22.7%-ով:

Ինչ վերաբերում է բանկային համակարգով ֆիզիկական անձանց ընդհանուր փոխանցումներին (ներառում է առևտրային և ոչ առևտրային բնույթի փոխանցումները), ապա 2009թ. երկրորդ եռամսյակում զուտ ներհոսքի նվազումը կազմել է տ/տ 22.0%: Ընդ որում՝ ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի նվազումը տ/տ կազմել է 35.5%: Դա հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանի[9] տնտեսության անկման խորացմամբ (2009թ. երկրորդ եռամսյակում Ռուսաստանի ՀՆԱ անկումը, ըստ գնահատումների, կազմել է 10.6%) և մինչև տարեվերջ զարգացման վատատեսական նոր սպասումներով:

Վերը նշված հոսքերի և ՀՆԱ անկման պայմաններում ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը, ըստ գնահատումների, վատացել է և, 2009թ. առաջին կիսամյակի գնահատումների համաձայն, կազմել է 15.2%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 12.3%-ի փոխարեն:

<u>Համախմբված բյուջե</u>

2009 թվականի առաջին կիսամյակում համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային հատվածը ունեցել է ընդլայնող ազդեցություն[10], ինչը ամբողջությամբ պայմանավորված է ծախսերի ընդլայնող ազդակի ձևավորմամբ: Այսպես, պետական բյուջեի ծախսերը, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, ավելացել են 8.8 տոկոսով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկերը նվազել

---

[7] Հունվար-հունիսին ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալների նվազումը կազմել է 45.9%: Ծառայությունների եռամսյակային ցուցանիշները կանխատեսումներ են:

[8] Հունվար-հունիսին ապրանքների ներմուծման (ՍԻՖ) ծավալների նվազումը կազմել է 27.5%: Ծառայությունների եռամսյակային ցուցանիշները կանխատեսումներ են:

[9] Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների հիմնական մասը ստացվում է Ռուսաստանից:

[10] Հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը համախառն պահանջարկի վրա գնահատվում է հարկաբյուջետային ազդակների միջոցով: Ըստ հարկաբյուջետային ազդակների գործող մեթոդաբանության՝ եկամուտների ազդակի հաշվարկում օգտագործվող ՀՆԱ-ն՝ փաստացի անվանական ՀՆԱ-ն է, իսկ ծախսերի ազդակում՝ պոտենցիալ ՀՆԱ-ն:

են 18.3 տոկոսով (առանց սոցիալական ապահովագրության վճարների), իսկ կիսամյակի արդյունքում գրանցվել է չեզոք ազդակ: Ծախսերի ընդլայնող և եկամուտների չեզոք ազդակների ձևավորումը հիմնականում պայմանավորված է տարվա առաջին կեսին ՀՆԱ-ի զգալի ցածր մակարդակի ձևավորմամբ:

Ամփոփելով նշենք, որ առաջին կիսամյակի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա ունեցել է 3 տոկոս ընդլայնող ազդեցություն, ինչը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսերի աճով և ՀՆԱ մեծ անկումով:

Փող և վարկ

2009 թվականի առաջին եռամսյակում արձանագրված նվազումներից հետո, դրամավարկային ցուցանիշները 2009թ. երկրորդ եռամսյակում կայունացման միտումներ են դրսևորել: Դա պայմանավորվել է արտարժութային շուկայում փոխարժեքի նոր հավասարակշռության ձևավորմամբ և ԿԲ կողմից հետևողականորեն իրականացվող ծավալային ընդլայնման ու տոկոսադրույքների նվազեցման քաղաքականությամբ: Մասնավորապես, երկրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ-ն իջեցրել է ռեպո տոկոսադրույքը 1.5 տոկոսային կետով (ապրիլին՝ 7.5%, հունիսին՝ 6%), որը, սկսած մայիս ամսից, իր դրսևորումն է ստացել դրամային շուկայի տոկոսադրույքների նվազման վարքագծում: Այսպես, մայիս-հունիս ժամանակահատվածում նվազել են և՛ միջբանկային ռեպո տոկոսադրույքները (շուրջ 0.86 տոկոսային կետով), և՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (շուրջ 0.71 տոկոսային կետով):

Այս պայմաններում, երկրորդ եռամսյակում, ի տարբերություն նախորդ եռամսյակի, դրամավարկային ցուցանիշների աճ է արձանագրվել: Այսպես, փողի զանգվածը եռ/եռ ավելացել է 3.9%-ով, այդ թվում՝ ավանդներն աճել են 6.8%-ով, շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը՝ 11.3%-ով:

Պայմանավորված վերոնշյալ գործոններով՝ ի տարբերություն նախորդ եռամսյակի բարձրացման, այս եռամսյակում դոլարայնացման մակարդակը ևս դրսևորել է կայուն վարքագիծ: Այդ մասին է վկայում դոլարային արտահայտությամբ արտարժութային ավանդների եռ/եռ 3.3% աճը (նախորդ եռամսյակում եռ/եռ աճը կազմել է 37.6%):

Չնայած եռամսյակի ընթացքում վարկավորման նվազմանը՝ եռ/եռ 4.5%, եռամսյակի վերջին նկատվել է վարկային շուկայի աշխուժացում, որն արտահայտվել է ինչպես վարկավորման տոկոսադրույքների նվազման միտումների ձևավորմամբ, այնպես էլ նոր տրամադրվող վարկերի ծավալների աճով:

Արտաքին միջավայր[11]

ՀԱՋՈՐԴՈՂ 12 -ԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում 2009 թ-ին ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսական աճը, համաձայն ԱՄՀ կանխատեսումների, կլինի բացասական (-1.4%), իսկ ապրանքային շուկաներում գները կպահպանվեն նույն մակարդակի վրա: Մասնավորապես՝ 2009 թվականի, ինչպես նաև 2010թ. առաջին կեսի համար նավթի միջազգային գները (միջինը) մեկ բարելի դիմաց ակնկալվում են 60-70 ԱՄՆ դոլարի շրջակայքում, իսկ պղնձի գները կտատանվեն 4500-5000 ԱՄՆ դոլարի միջակայքում: Ոսկու՝ որպես պահուստային միջոցի գինը կպահպանվի համեմատաբար բարձր մակարդակում: Սպասվում է պարենային ապրանքների գների դանդաղ աճ: Մասնավորապես՝ հացահատիկի շուկայում

[11] *Արտաքին միջավայրի կանխատեսումների համար հիմք է ծառայել IMF, World Bank, The Economist, Global Insight, Financial Times, US Department of Agriculture, РосБизнесКонсалтинг և այլ աղբյուրների տեղեկատվությունը:*

կանխատեսվում է գների շարունակական աճ հաջորդ 12 ամսվա ընթացքում, ընդհուպ մինչև 6.8 ԱՄՆ դոլար՝ մեկ բուշելի դիմաց: Գների որոշակի աճ է կանխատեսվում նաև շաքարավազի շուկայում: Ակնկալվում է, որ երկրները կշարունակեն իրականացնել խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն՝ վարկային շուկաներում իրավիճակի բարելավման ու համախառն պահանջարկի վերականգնման նպատակով: 2009 թ. վերջին և 2010 թ. սկզբին, համաշխարհային տնտեսական իրավիճակի հնարավոր բարելավմամբ պայմանավորված, կանխատեսվում է տնտեսական աճի և գնային ցուցանիշների դանդաղ վերականգնում: ԱՄՀ գնահատման համաձայն՝ 2010թ. սպասվում է 2.5 տոկոս տնտեսական աճ, այդ թվում՝ զարգացած երկրներում տնտեսական աճը կկազմի 0.6 տոկոս (ԱՄՆ՝ 0.8 տոկոս, Եվրոգոտի՝ -0.3 տոկոս, Ճապոնիա՝ 1.7 տոկոս), իսկ զարգացող երկրներում՝ 4.7 տոկոս (Չինաստան՝ 8.5 տոկոս, Հնդկաստան՝ 6.5 տոկոս, Ռուսաստան՝ 1.5 տոկոս): Միաժամանակ, նշված կանխատեսումների անորոշության մակարդակը դեռևս շարունակում է մնալ շատ բարձր և կարող են ի հայտ գալ ինչպես աճի, այնպես էլ նվազման ուղղությամբ ռիսկեր:

Համախառն առաջարկ

Տնտեսության ճյուղերի կանխատեսումների վերանայման արդյունքում 2009 թվականին ակնկալվում է շուրջ 12-15% տնտեսական անկում՝ հիմնականում պայմանավորված ՀՆԱ-ում համեմատաբար մեծ տեսակարար կշիռներ ունեցող շինարարության և ծառայությունների ճյուղերի՝ նվազման ուղղությամբ վերանայված կանխատեսումների:

2010 թվականի առաջին կիսամյակում ակնկալվում է տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների իրական աճերի վերականգնում՝ պայմանավորված ինչպես 2009 թվականի առաջին կիսամյակում արձանագրված տնտեսական անկմամբ, այնպես էլ ՀՀ Կառավարության կողմից մեծածավալ ծրագրերի իրականացմամբ: Արդյունքում՝ 2010 թ. առաջին կիսամյակում ակնկալվում է տնտեսության վերականգնում. ըստ ԿԲ գնահատումների՝ տնտեսական աճը կկազմի շուրջ 0.5-2%:

Տնտեսական աճի ռիսկերը երկկողմանի են, ընդ որում՝ գերակշռում են նվազման ուղղությամբ ռիսկերը՝ պայմանավորված համաշխարհային պահանջարկի տևական անկման պայմաններում ներքին պահանջարկի՝ ակնկալվածից ավելի նվազման և ՀՀ Կառավարության կողմից իրականացվելիք ծրագրերի իրագործման արագությամբ: Միաժամանակ, աճի ուղղությամբ ռիսկերը կախված են Կառավարության՝ տրանսպորտային և էներգետիկ խոշորածավալ տարածաշրջանային ծրագրերի իրագործման ընթացքից:

Արդյունաբերության ճյուղի կանխատեսումները վերանայվել են աճի ուղղությամբ՝ պայմանավորված Կառավարության մեծածավալ ծրագրերով: Մասնավորապես, Կառավարության կողմից հանքարդյունաբերական ընկերություններին բյուջետային վարկերի և երաշխիքների ձևով տրվող ֆինանսական աջակցության շնորհիվ, մետաղի հանքաքարերի արդյունահանման և մետաղագործական արդյունաբերության ենթաճյուղերում տարվա արդյունքում ակնկալվում է ավելացված արժեքի իրական աճ:

Վերոնշյալ ենթաճյուղերում ակնկալվող աճը մասամբ կփոխհատուցի սննդի արդյունաբերության (համաշխարհային պահանջարկի կրճատման հետևանքով սննդի վերամշակման ենթաճյուղում ակնկալվող թողարկման ծավալների և կոնյակի արտահանման ծավալների նվազմամբ), շինանյութերի արտադրության (շինարարության անկման հետևանքով), ինչպես նաև ոսկերչական արտադրատեսակների և քիմիական արդյունաբերության (համաշխարհային պահանջարկի կրճատման հետևանքով) ենթաճյուղերի ավելացված արժեքների իրական աճի ակնկալվող նվազումները: Արդյունքում՝ 2009 թվականին արդյունաբերության ճյուղում կանխատեսվում է ավելացված արժեքի 4-7% իրական նվազում:

2010 թվականի առաջին կիսամյակում ակնկալվում է արդյունաբերության ճյուղի վերականգնում և, ԿԲ գնահատումների համաձայն, ճյուղի իրական աճը կկազմի շուրջ 4 - 7%:

Շինարարության ճյուղում ավելացված արժեքի կանխատեսումները վերանայվել են նվազման ուղղությամբ՝ պայմանավորված կապիտալի ներհոսքի և բնակչության եկամուտների ակնկալվող նվազմամբ, ինչպես նաև բնակարանային շինարարության զգալի անկմամբ: Չնայած Կառավարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ շինարարության ճյուղում անկման տեմպերը աստիճանաբար կնվազեն, այդուհանդերձ տարեվերջին ակնկալվում է ավելացված արժեքի 40-50% իրական նվազում:

2010 թվականի առաջին կիսամյակում շինարարության ճյուղի անկման տեմպերի դանդաղումը կշարունակվի, իսկ կիսամյակի ավարտին կձևավորվի աճի դրական ցուցանիշ:

Գյուղատնտեսության ճյուղի կանխատեսումները չեն վերանայվել. ակնկալվում է 2-3% իրական աճ՝ պայմանավորված բնականոն աճի բազայի՝ այգիների և ցանքատարածությունների, ինչպես նաև անասնագլխաքանակի ավելացմամբ:

2010 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսության ճյուղում ակնկալվում է շուրջ 4% իրական աճ:

Ծառայությունների ոլորտում ակնկալվող աճի ցուցանիշները նույնպես վերանայվել են նվազման ուղղությամբ՝ պայմանավորված մասնավոր և պետական սպառման կանխատեսվող ցուցանիշների ճշգրտմամբ, որն անդրադառնալու է ինչպես առևտրաշրջանառության ծավալների, այնպես էլ մատուցված այլ ծառայությունների ծավալների վրա: Արդյունքում՝ 2009 թվականին կանխատեսվում է ծառայությունների ավելացված արժեքի զրոյական իրական աճ:

2010 թվականի առաջին կիսամյակում ակնկալվում է ծառայությունների վերականգնում և, ԿԲ գնահատումների համաձայն, ճյուղի իրական աճը կկազմի 1-4%:

ՀՆԱ իրական աճի կանխատեսման հավանականությունների բաշխում
(եռամսյակը՝ նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ)



Տնտեսական աճի կանխատեսման հավանականությունների բաշխում

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում գտնվելու հավանականություն			
	2009թ. III եռ.	2009թ. IV եռ.	2010թ. I եռ.	2010թ. II եռ.
< -21%	3.16%	0.18%	0.00%	0.01%
-21 - -18%	42.10%	1.74%	0.03%	0.03%
-18 - -15%	51.03%	8.76%	0.23%	0.15%
-15 - -12%	3.68%	23.37%	1.23%	0.58%
-12 - -9%	0.01%	33.07%	4.50%	1.76%
-9 - -6%	0.00%	23.56%	11.43%	4.34%
-6 - -3%	0.00%	7.95%	20.15%	8.62%
-3- 0%	0.00%	1.26%	24.64%	13.82%
0 - 3%	0.00%	0.09%	21.04%	18.40%
3%-6%	0.00%	0.00%	11.55%	18.64%
6%-9%	0.00%	0.00%	4.35%	15.49%
9% <	0.00%	0.00%	1.10%	10.20%

Աշխատանքի շուկա

2009 թվականի երկրորդ կիսամյակի աշխատանքի շուկայի ցուցանիշների կանխատեսումները որոշակիորեն վերանայվել են՝ հիմք ընդունելով տնտեսության ընթացիկ զարգացումները և մյուս հատվածների վերանայված կանխատեսումները: Մասնավորապես՝ երկրորդ կիսամյակի ընթացքում, աշխատանքի շուկայում կոշտությունների որոշակի մեղմման պայմաններում, ակնկալվում է տնտեսության միջին անվանական աշխատավարձի շուրջ 1.5%-ով նվազում՝ ի հաշիվ մասնավոր հատվածում անվանական աշխատավարձերի կրճատման: Կարձանագրվի աշխատանքի արտադրողականության զգալի՝ շուրջ 12% նվազում: Նշված ժամանակահատվածում գործազրկության միջին մակարդակը կավելանա 1.6 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված համախառն պահանջարկի անկման հետևանքով տնտեսության ճյուղերում կարողությունների թերի գործարկմամբ:

2009 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում աշխատանքի շուկայի զարգացումները որոշակի գնաճային ճնշումներ կառաջացնեն սպառողական շուկայում, քանի որ աշխատանքի շուկայի կոշտությունների պայմաններում աշխատանքի արտադրողականությունն ավելի արագ տեմպերով կնվազի, քան աշխատավարձերը: Արդյունքում՝ մասնավոր հատվածում կարձանագրվի միավոր աշխատուժի ծախսերի որոշակի աճ, որը շուրջ 0.5-0.7 տոկոսային կետով կխթանի գնաճը: 2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, սակայն, աշխատանքի շուկայի ցուցանիշները որոշակիորեն կբարելավվեն, որին մեծապես կնպաստեն պետության վարած հակաճգնաժամային միջոցառումները՝ ուղղված մասնավոր հատվածում տնտեսական ակտիվության խթանմանը:

Համախառն պահանջարկ

Մասնավոր հատվածի ծախսումներ

Ըստ վերանայված գնահատումների՝ 2009 թվականի ընթացքում սպասվում է մասնավոր իրական ծախսումների 15-16% նվազում: Ծախսումների կառուցվածքում զգալի՝ շուրջ 35 - 38% նվազում է արձանագրվելու մասնավոր ներդրումների գծով՝

պայմանավորված կապիտալի ներհոսքի զգալի կրճատմամբ և բնակչության եկամուտների շարունակական նվազմամբ: Մասնավոր սպառման իրական նվազումը կարձանագրվի 4 - 6%-ի շրջանակներում՝ արտացոլելով մասնավոր հատվածում եկամուտների իրական նվազումը: Արդյունքում՝ մասնավոր ծախսումները 2009 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կշարունակեն ցածր մնալ պոտենցիալ մակարդակից շուրջ 8 - 9%-ով և գնանկումային ճնշումներ կառաջացնեն սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը ավելի քան 2.4 - 2.7 տոկոսային կետով: Նշենք սակայն, որ արդեն 2010 թվականի առաջին կիսամյակում մասնավոր ծախսումների նվազման տեմպերը զգալիորեն կդանդաղեն՝ պայմանավորված պետության կողմից ձեռնարկված հակաճգնաժամային մի շարք միջոցառումներով, որոնք կխթանեն մասնավոր հատվածում տնտեսական ակտիվությունը: Մասնավոր ծախսումները կնվազեն 0.5 - 1.0%, ընդ որում, եթե մասնավոր սպառումը կնվազի շուրջ 0.5 - 1%-ով, ապա մասնավոր ներդրումների գծով կարձանագրվի փոքր դրական աճ:

Ընթացիկ հաշիվ

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության վերականգնման անորոշությունները և ներքին տնտեսության զարգացման նոր կանխատեսումները՝ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հոդվածների հետագա կանխատեսումները փոքր-ինչ փոփոխվել են: Մասնավորապես՝ մինչև տարեվերջ ակնկալվում է ապրանքների և ծառայությունների արտահանման նվազում 30-35%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված կլինի մետաղների գների ցածր մակարդակի պահպանմամբ և այն հանգամանքով, որ ՀՀ դրամի իրական փոխարժեքի արժեզրկման ազդեցությունը արտահանման վրա ավելի դանդաղ է տեղի ունենում, քան կանխատեսվում էր: Արդյունքում՝ ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների նվազումը մինչև տարեվերջ կկազմի 8-11%՝ չնայած պղնձի և մոլիբդենի արտահանման իրական ծավալների ակնկալվող աճին:

Ներմուծումը, նախկին կանխատեսումների համեմատ, էական փոփոխություն չի կրել, քանի որ ՀՆԱ նվազման ընթացիկ և սպասվող բարձր տեմպերը, ինչը հակառակ պարագայում պետք է հանգեցներ ներմուծման էլ ավելի նվազմանը, փոխհատուցվելու են հարկաբյուջետային ընդլայնող քաղաքականությամբ: Վերջիններս, ներմուծման ներքին փոխարինիչների սահմանափակության պայմաններում, կարճաժամկետում զսպելու են ներմուծման նվազման բարձր տեմպերը՝ սպառողական և ներդրումային ապրանքների ներմուծման միջոցով: Արդյունքում՝ 2009թ. վերջում ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազումը կգտնվի 30-35%-ի, իսկ իրական ծավալների նվազումը՝ 25-30%-ի շրջանակներում:

Ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային բնույթի փոխանցումների կանխատեսումները չեն փոփոխվել և մինչև տարեվերջ վերջիններիս զուտ ներհոսքի նվազումը կկազմի 30-35%: Նշված կանխատեսումները պայմանավորվելու են Ռուսաստանի տնտեսության ներկա և ապագա զարգացումներով:

Տրված հոսքերի արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2009թ. առաջին կիսամյակի 15%-ի պայմաններում տարեկան կտրվածքով կձևավորվի 10-12% մակարդակում:

2010թ. առաջին կիսամյակի զարգացումները կպայմանավորվեն համաշխարհային և ներքին տնտեսության վերականգնման տեմպերով, և արտահանման աճն ակնկալվում է 8-11%-ի միջակայքում, իսկ ներմուծման մասով նվազման տեմպերը կձևավորվեն 0-3%-ի միջակայքում: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների աճը կկազմի 3-6%՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազման 6-9%-ի պարագայում: Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց դրամական փոխանցումներին, ապա 2010թ. առաջին կիսամյակում ակնկալվում է վերջիններիս աճ 5-8%-ի միջակայքում, ինչը կպայմանավորվի այն հանգամանքով, որ հաջորդ տարում արդեն իսկ ակնկալվում է Ռուսաստանի տնտեսության դրական աճ (ԱՄՀ-ի նոր կանխատեսումների համաձայն՝ Ռուսաստանի տնտեսական աճը 2010թ. կկազմի

1.5%): Նշված զարգացումների արդյունքում 2010թ. սպասվում է ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի բարելավում:

Համախմբված բյուջե

ՀՀ Կառավարության հակաճգնաժամային ծրագրերի իրականացման շնորհիվ տարվա արդյունքում հնարավոր կլինի նախորդ տարվա համեմատ ապահովել ծախսերի (ներառյալ զուտ վարկավորումը) մոտ 24 տոկոս աճ: Իսկ պետական եկամուտների գծով ակնկալվում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի նախորդ տարվա նույն մակարդակի պահպանում, որի ապահովման համար կարևոր նախապայման է հարկային վարչարարական միջոցառումների շարունակական բարելավումը:

Ինչպես և ակնկալվում էր, ՀՀ Կառավարության նախաձեռնած հակաճգնաժամային ծրագրերի իրականացումը, ուրեմն նաև 2009 թվականի պետական ծախսերի (ներառյալ զուտ վարկավորումը) 2/3-ի ապահովումը նախատեսված է երկրորդ կիսամյակում: Տարվա արդյունքում ակնկալվում է բյուջեի պակասուրդի բավականին մեծ մակարդակ, որի պարագայում համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը, ըստ հաշվարկված ազդակների, կկազմի շուրջ 6.4 % ընդլայնող: Սակայն հարկ է նշել, որ նման մեծածավալ ծախսումների պայմաններում, ըստ ԿԲ գնահատումների, տնտեսության կողմից իրացվելիության կլանման որոշակի դժվարություններ կարող են առաջանալ:

Պայմանավորված Կառավարության հակաճգնաժամային ծրագրերի շարունակմամբ, 2010 թվականի առաջին կեսին ևս պետական հատվածի ազդեցությունը գնահատվել է ընդլայնող: Վերջինս կնպաստի ներքին պահանջարկի խթանմանը և արդյունքում՝ 2010 թվականի առաջին կեսից տնտեսական աճի վերականգնմանը:

Փող և վարկ

2009 թվականի երկրորդ եռամսյակում ֆինանսական շուկայի որոշակի կայունացումից հետո, հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվում է դրամավարկային ցուցանիշների աճի բարձր տեմպերի վերականգնում՝ պայմանավորված մի կողմից հարկաբյուջետային ընդլայնող քաղաքականությամբ, մյուս կողմից ԿԲ-ի կողմից շարունակվող խթանող դրամավարկային քաղաքականությամբ: Արդյունքում, փողի զանգվածը կավելանա 25.6%-ով, իսկ վարկերն ու ավանդները, համապատասխանաբար՝ 8.5%-ով և 36.4%-ով: 2010թ. առաջին կիսամյակում վերոնշյալ քաղաքականությունների շարունակման պարագայում ակնկալվում է փողի զանգվածի և նրա բաղադրատարրերի աճի տեմպերի հետագա արագացում:

Տնտեսություն մեծածավալ իրացվելիության ներարկման և վարկավորման ծավալների աճի արդյունքում, շուրջ 9.8 տոկոսային կետով կաճի նաև ֆինանսական միջնորդությունը բնութագրող փողայնացման գործակիցը՝ կազմելով 29%: Նման զարգացումները հիմնականում պայմանավորված կլինեն այդ ժամանակահատվածում ակնկալվող խոշոր պակասուրդային բյուջեով, որի պայմաններում 2010թ. երկրորդ եռամսյակում տնտեսության վարկավորման ցուցանիշը կաճի տարեկան մինչև 13%-ով:

Ընդ որում, եթե Կառավարության հակաճգնաժամային ծրագրերի շրջանակներում իրականացվող մեծածավալ ծախսումների արդյունքում առաջանան տնտեսություն ներարկվող դրամային իրացվելիության կլանման դժվարություններ, ապա հնարավոր է ԿԲ-ն և Կառավարությունը իրականացնեն կոորդինացված միջոցառումներ՝ վերջինիս առավել հարթ ընթացք ապահովելու նպատակով:

ԳՆԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ 12-ԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Կանխատեսվող ժամանակահատվածում ընդհանուր գնաճի վարքագիծը պայմանավորող հիմնական գործոնը շարունակելու է մնալ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով ներքին պահանջարկի գծով խոշոր բացասական ճեղքվածքի պահպանումը: Միաժամանակ ակնկալվում է, որ Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների և ԿԲ կողմից իրականացվող տոկոսադրույքների իջեցման ու ծավալային ընդլայնման համակցման քաղաքականության արդյունքում մինչև կանխատեսվող ժամանակահատվածի ավարտը հնարավոր կլինի ապահովել տնտեսական աճի տեմպերի վերականգնումը: Այս պարագայում, ինչպես վկայում են նաև ԿԲ-ում կիրառվող եռամսյակային կանխատեսումների մոդելի արդյունքները, ներկայումս առկա գնանկումային ճնշումները աստիճանաբար կմեղմվեն, և կանխատեսվող 12-ամսյա ողջ ժամանակահատվածի ընթացքում գնաճը կպահպանվի 4±1.5% նպատակային միջակայքում: Ըստ ապրանքատեսակների գնաճի մոդելի արդյունքների՝ տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի վարկածի պայմաններում, 2010 թվականի երկրորդ եռամսյակի վերջին գնաճի կանխատեսման կենտրոնական արժեքը կկազմի 2.7%, իսկ 2009 թ. տարեվերջին՝ 3.5%: Ընդ որում, կանխատեսվող ժամանակահատվածում կարող են ի հայտ գալ ինչպես գնաճի նվազման, այնպես էլ ավելացման ուղղությամբ ռիսկեր՝ կախված կառավարության հակաճգնաժամային ծրագրերի իրագործման արդյունքում տնտեսություն ներարկվող իրացվելիության կլանման արագությունից, համաշխարհային տնտեսության վերականգման ժամկետներից, ինչպես նաև տրանսպորտային և էներգետիկ խոշորածավալ տարածաշրջանային ծրագրերի իրագործման ընթացքից:

ԳՆԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՐԱՖԻԿ



Գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխում

Գնաճի միջակայքը	Գնաճի՝ տվյալ միջակայքում լինելու հավանականություն	
	2009թ. IV եռ.	2010թ. II եռ.
< 1.0%	0.09%	14.4%
1.0-2.0%	2.9%	18.7%
2.0-3.0%	23.3%	24.3%
3.0-4.0%	46.8%	21.7%
4.0-5.0%	23.9%	13.3%
5.0-6.0%	3.0%	5.6%
6.0-7.0%	0.09%	1.6%
> 7.0%	0.0%	0.4%

Նպատակային միջակայքում պահպանվող գնաճի, գնանկումային և գնաճային ռիսկերի հավասարակշռության պայմաններում տնտեսության արագ վերականգնումն ապահովելու նպատակով ԿԲ-ն շարունակելու է իրականացնել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն՝ զուգահեռաբար կիրառելով վերաֆինան-սավորման տոկոսադրույքի նվազեցում և ծավալային ընդլայնում: Միաժամանակ, վերոնշյալի և խոշոր պակասուրդային բյուջեի առկայության պայմաններում կարևորվում է տնտեսություն ներարկվող իրացվելիության կլանման առավել հարթ ընթացքի ապահովումը՝ տնտեսության վերականգնման տեմպերն արագացնելու և հնարավոր գնաճային ռիսկերը չեզոքացնելու նպատակով: